ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՄԱՍԻԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ Ամասիա փ. 26, շենք 19
հեռ՝ (0246)_22310
հեռ՝ (0246)_22925
Ֆաքս՝ (0246)22310

05.12.2012թ.

ՀՀ Շիրակի մարզպետ
պարոն՝ Ա.Գիզիրյանին

Հարգելի պարոն Գիզիրյան

Ձեզ եմ ուղարկում Ամասիա համայնքի ավագանու 4 դեկտեմբերի 2012թ. նիստի թիվ 30-Ն, թիվ 31-Ն որոշումներն իրենց հավելվածներով և թիվ 32 որոշումը:

Առ դիր 7 /յոթ/ թերթ:

Հարգանքներով՝

Ա. Ամիրյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 7651-12
05. 12. 12թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՄԱՍԻԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

4. դեկտեմբերի 2012թ. գ. Ամասիա

ՈՐՈՇՈՒՄ 30-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի « Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը:

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝

Ա. Դավթյան		կողմ
Ա. Խաչատրյան		կողմ
Հ. Հովսեփյան		կողմ
Ա. Մանուկյան		կողմ
Ա. Մկրտումյան		կողմ
Ա. Սարգսյան		կողմ
Ա. Քոչոյան		կողմ

Ամասիա համայնքի ղեկավար՝ Ա. Ամիրյան

4.դեկտեմբերի 2012թվական
գ. Ամասիա

Հավելված
Ամասիայի գյուղական համայնքի
ավագանու 2012-թվականի դեկտեմբերի
4-ի N 12-Ա 30-Ն որոշման

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Թվաքանակը	Տոկոսաչափը համայնքի ղեկավարի աշխատավարձի համեմատ	Պաշտոնային դրույքաչափը
1.	**Հայեցողական պաշտոն**			
1.	համայնքի ղեկավարի տեղակալ	1	75.3	128.000
2.	**Համայքային ծառայողներ**			
1.	համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար	1	74.7	127.000
2.	առաջատար մասնագետ,հաշվապահ	1	73.5	125.000
3.	2-րդ կարգի մասնագետ	1	57.1	97.0
4.	2-րդ կարգի Ї մասնագետ	1	57.1	97.0
5.	2-րդ կարգի մասնագետ	1	57.1	97.0
6.	2-րդ կարգի մասնագետ	1	57.1	97.0
3.	**Քաղաքացիական կացության ակտերի գրանցման առանձնացված ստորաբաժանում**			
1.	բաժնի պետ	1	74.1	126.000
4.	**Սպասարկող անձնակազմ**			
1.	պահակ	1	35.9	61.000
2.	պահակ	1	35.9	61.000
3.	վարորդ /ծառայողական մեքենայի/	1	39.4	67.000
4.	վարորդ /աղբատար մեքենայի/	1	39.4	67.000
5.	բանվոր /աղբահավաք/	1	39.4	67.000
6.	բանվոր /աղբահավաք/	1	39.4	67.000
7.	պարետ	1	42.9	73.000
8.	գործավար	1	39.4	67.000
9.	հավաքարար /փողոցների/	1	35.9	61.000
10.	հավաքարար /վարչական շենքի/	1	35.9	61.000
11	հավաքարար /վարչական շենքի/	1	35.9	61.000
5.	**Մարզադպրոց**			
1.	մարզադպրոցի տնօրեն/մարզիչ	1,5	50	85.000
2.	հաշվապահ	1	35.9	61.000
3.	մարզիչ	1	35.9	61.000
4.	մարզիչ	1	32.4	55.000
6.	**Գրադարան**			
1.	գրադարանի տնօրեն	1	45.3	77.000
2.	հաշվապահ	1	35.9	61.000
3.	գրադարանավար	1	32.4	55.000
4.	գրադարանավար	1	32.4	55.000
	Համայնքային կենտրոն			
1	Համայնքային կենտրոնի պատասխանատու	1	35.9	61.000

Ամասիայի համայնքի ղեկավար՝ Ա. Ամիրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՄԱՍԻԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

4. դեկտեմբերի 2012թ. գ. Ամասիա

ՈՐՈՇՈՒՄ 31-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի դրույթով՝

Ավագանին որոշում է

Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի տարածքում 2013թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝

Ա. Դավթյան	կողմ
Ա. Խաչատրյան	կողմ
Հ. Հովսեփյան	կողմ
Ա. Մանուկյան	կողմ
Ա. Մկրտումյան	կողմ
Ա. Սարգսյան	կողմ
Ա. Քոչոյան	կողմ

Ամասիա համայնքի ղեկավար՝ Ա. Ամիրյան

4.դեկտեմբերի 2012թվական
գ. Ամասիա

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ամասիայի համայնքի
ավագանու 2012թվականի դեկտեմբերի 4-ի
թիվ 31-Ն որոշման

Տեղական տուրքերի և վճարների մասին:

1. ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար գանձվող տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ Մինչև 300 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 4500 դրամ,

բ/ 201-ից մինչև 500 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների (բացառությամբ 1 կետում նշված շինությունների) համար 9000 դրամ,

գ/ 501-ից մինչև 1000 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների (բացառությամբ 1 կետում նշված շինությունների) համար 15.000 դրամ,

դ/ 1001 և ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների բացառությամբ 1 կետում նշված շինությունների) համար 21.000 դրամ,

ե/ մինչև 20 ք.մ. տարածք զբաղեցնող ոչ հիմնական շինությունների համար 900 դրամ,

զ/ 20 և ավելի ք.մ. տարածք զբաղեցնող ոչ հիմնական շինությունների համար 1500 դրամ

2. ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար գանձվող տեղական տուրքը սահմանվում է՝ 900 դրամ, մինչև 300 ք.մ. 5400 դրամ, 201-ից մինչև 500 ք.մ. 9900 դրամ, 501-ից 1000 ք.մ. 15.000 դրամ, 1001-ից ավելի ք.մ. 21.000 դրամ:

3. ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման համար գանձվող տեղական տուրքը սահմանվում է՝ 1500 դրամ:

4. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

ա/ հիմնական շինությունների ներսում վաճառքի (իրացման) կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 6000 դրամ,

բ/ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի (իրացման) կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 6000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ,

բ/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի

թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 150.000 դրամ:

գ/ գյուղապետարանի մթերքների համար 250.000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները / սաունաները /, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25.000 ՀՀ դրամ,

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 ՀՀ դրամ,

գ/ բաղնիքների / սաունաների / համար՝ 200.000 ՀՀ դրամ,

դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500.000 ՀՀ դրամ,

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 ՀՀ դրամ,

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 ՀՀ դրամ:

է/ թանկարժեք մետաղներից պատրաստած իրերի մանրածախ առքուվաճառքի համար 25.000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 ՀՀ դրամ,

բ/ թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս / արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 ՀՀ դրամ,

գ/ այլ արտաքին գովազդի համար՝ 1500 ՀՀ դրամ,

դ/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 ՀՀ դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1000 ՀՀ դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 10.000 ՀՀ դրամ:

Տեղական վճար՝

1. ա/ Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 ՀՀ դրամ,

բ/ Համայնքի տարածքում շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 ՀՀ դրամ,

գ/ Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել 1000 ՀՀ դրամ,

դ/ Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 ՀՀ դրամ:

ե/

հ/հ	Շինության անվանումը	Վճարի ամսեկան չափը դրամ
	1. Կրպակներ և խանութներ	
	մինչև 5քմ առևտրային մակերես	300
	5-10քմ. առևտրային մակերես	400
	10-20քմ. առևտրային մակերես	500
	20-30քմ. առևտրային մակերես	1000
	30-60քմ. առևտրային մակերես	1500
	60-90քմ. առևտրային մակերես	2000
	1000քմ. ավելի առևտրային մակերես	4000
	2. Հանրային սննդի օբյեկտներ	
ա.	սրճարաններ	
	մինչև 10 սեղան	1000
	10-15 սեղան	1500
	20-ից ավել սեղան	3000
	3. Գրասենյակներ,օֆիսներ,դեղատներ	
	մինչև 50քմ. մակերես	2000
	50-80քմ. մակերես	3000
	4. Բուժ. հիմնարկներ-հիվանդանոցներ և կլինիկաներ	
	մինչև 50 մահճակալ	1000
	Պոլիկլինիկաներ	
	օրական մինչև 100 հաճախորդ	10.000
	100-200 հաճախորդ	20.000
	5. Հանրակրթական դպրոցներ,քոլեջներ,վարժարաններ,սպորտ դպրոցներ,երաժշտական դպրոցներ	
	մեկ մասնակցի համար	80/մեկ ուս տարվա համար/
	6. Բանկեր	
	մինչև 50քմ. մակերես	2000
	50-100քմ. մակերես	3000
	7.Վարչական շենքեր	
	մինչև 200քմ. մակերես	5000
	200քմ.-ից ավել մակերես	10.000
	8. Արտադրամասեր	
	մինչև 200քմ. մակերես	5000
	200քմ.-ից ավելի մակերես	10.000
	9. Բենզալիցքավորման կայաններ	
	1-2 լիցքավորման սարք	2000
	3-ից ավելի լիցքավորման սարք	3000
	10. Բնակչությանը մատուցվող ծառայություններ	
	աղբահանություն	
	1 անձը	100

Բազմաբնակարան բնակելի շենքերի սպասարկման յուաքանչյուր քմ. համար սահմանել 10 դրամ ամսեկան վարձ:

Գյուղապետարանի վարչական շենքի տարածքի վարձակալության 1 ամսվա արժեքը սահմանել 1 ք.մ.-ը առաջին հարկի համար 223 ՀՀ դրամ, երկրորդ, երրորդ և չորրորդ հարկերի համար 168 ՀՀ դրամ:

Ամասիայի «Նանե նախակրթարան» ՀՈԱԿ հաճախելու համար 1 երեխայի ամսեկան վարձավճարը սահմանել 5.000 դրամ:

Ամասիա համայնքի ղեկավար՝ Ա. Ամիրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՄԱՍԻԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

4. դեկտեմբերի 2012թ. գ. Ամասիա

ՈՐՈՇՈՒՄ 32

«ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՐԶԱ- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի, 5-րդ կետի դրույթով

Ավագանին որոշում է

«Հաշմանդամների Մարզա-Մշակութային կենտրոն» հասարակական կազմակերպությանը տրամադրել դրամական օգնություն 25.0հազար դրամի չափով:

Ավագանու անդամներ՝

Ա. Դավթյան	կողմ
Ա. Խաչատրյան	կողմ
Հ. Հովսեփյան	կողմ
Ա. Մանուկյան	կողմ
Ա. Մկրտումյան	կողմ
Ա. Սարգսյան	կողմ
Ա. Քոչոյան	կողմ

Ամասիա համայնքի ղեկավար՝ Ա. Ամիրյան

4.դեկտեմբերի 2012թվական
գ. Ամասիա